# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար Երևանի N 191 դպրոցի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/5 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2016 թվականի սեպտեմբերի 9-ին կնքված N ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/5 պայմանագրում 2019 թվականի հունվարի 17-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1 ՀՀ Կառավարության 27.12.2018 թ. թիվ 1515-Ն որոշմամբ Երևանի N 191 դպրոցի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների N ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/5 պայմանագրի կատարման համար հատկացվել է ֆինանսական միջոց:

Փոփոխության նկարագրություն — Պայմանագրի 4.1.2 և 7.3 կետերի համաձայն կնքվել է հերթական համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում — ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված՝ Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 19-րդ կետ:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

7135540-3
(702)

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

**09.09.2016թ. կնքված N ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/5 գնման պայմանագրի**

ք. Երևան 18.01.2019թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա մի կողմից, և <<ՇԻՆ-ՏԵԽ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Ավագյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի և Կատարողի միջև Երևանի N 191 դպրոցի վերակառուցման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման 09.09.2016թ. կնքած N ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/5 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 4.1.2 և 7.3 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կատարողի կողմից Պայմանագրի N1 հավելվածով հաստատված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 2019թ. ընթացքում մատուցման ենթակա ծառայությունների գինը սահմանել 258900 (երկու հարյուր հիսունութ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:

1.2 Հաստատել վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելվածը բաղկացած 1 (մեկ) էջից համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Պատվիրատու՝ | Կատարող՝ |
|---|---|
| **ՀՀ քաղաքաշինության կոմիտե** | <<ՇԻՆ-ՏԵԽ>> ՍՊԸ |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3 | ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Որոտան 2ա, բն. 18 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ |
| Հ/Հ 900011011823 | Հ/Հ 11500321540300 |
| ՀՎՀՀ 02565827 | ՀՎՀՀ 09214562 |

Գլխավոր քարտուղար՝ Տնօրեն՝

_____________ Ա. Մկրտչյան _____________ Ա. Ավագյան

(ստորագրություն) (ստորագրություն)

Կ.Տ. Կ.Տ.

Հավելված
09.09.2016թ. կնքված ծառայությունների մատուցման
N ՔՆՔԾՈՒԳ-ԲԸՀԾՁԲ-16/5 գնման պայմանագրի
18.01.2019 թ. կնքված N 3 համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

(բաժին 09, խումբ 06, դաս 01, ծրագիր 02)

ՀՀ դրամ

| Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդա-մենը տարի |
| Երևանի N 191 դպրոցի վերակառուցման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն | - | 25900 | 25900 | 116500 | 116500 | 116500 | 220100 | 220100 | 220100 | 258900 | 258900 | 258900 | 258900 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**Պատվիրատու՝**
**ՀՀ քաղաքաշինության կոմիտե**
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011011823
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝
_______________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կատարող՝**
<<ՇԻՆ-ՏԵԽ>> ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան,
Որոտան 2ա, բն. 18
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11500321540300
ՀՎՀՀ 09214562

Տնօրեն՝
_______________ Ա. Ավագյան
(ստորագրություն)
Կ.Տ.